



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ. Փարպի, (0232)64303 parpi.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33

ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՀԱԳՆ ՊԱՎԵԼԻ ԵԴԻԳԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԵՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ինքնական կառուցված շենքերի և ինքնական զբաղեցրած հողամասերի կարգավիճակի մասին 26.12.2002թ. ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի, 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վահագն Պավելի Եդիգարյանի կողմից իրեն հատկացված հողամասից քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն չի խոչընդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, ինչպես նաև հնագիտական, պատմամշակույթային հողօգտագործողների պահպանության գոտիներում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Ճանաչել Վահագն Պավելի Եդիգարյանի սեփականության իրավունքը Փարպի համայնքում ըստ կադաստրային քարտեզագրման 145-034 ծածկագրով փաստացի օգտագործվող 0.0202 հա հողամասի նկատմամբ:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝



ԻՇԽԱՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ